



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 45

ՀԱՐԱՐ

5 ՅՈՒԼԻՍ 1908

ԱՊԱՀՆԱԿԱՐԳ ԵՄԱՅՈՑՅՆԵՐ

ԶԵՆԻԹ

ԱՊԱՀՆԱԿԱՐԳ ԵՄԱՅՈՑՅՆԵՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՅՈՒՅԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.

Պաշտոն-Գարու, Օռոգար-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատր 40 փառս

(Դ. Ասադորյան) شرکت صنیعہ مطبعہ - باب فال حادہ سندہ نومبر ۱۹۰۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառարի քիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
վիանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ առողջութեան աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԺԱՅԺԻՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. այն մեքենան ամենէն կաւարի լաւագործութեամբ,
կատարունակ եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՂԵՐՄԱՆԻՄԻՆ

- | | | |
|---------|---|--|
| ԲՆԲԱ | (| 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| |) | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (| 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| |) | 2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (| 1. Սուլթան համամ . |
| |) | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | | Զարը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաժշտութիւն

Մասնահիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱ-
թերթ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գա-
ւառներու համար տարեկան 108 դրշ. վեց-
ամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւր փաւր: **ԱՐԵՒԵԼՔ**
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբ-
ագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Մանօթ Դէմքեր և Լեւրեմն ալ տեսո-
րաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մա-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բացի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, որուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագրիչպէտք է ուղղել Տէր և
Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճառափէսի, ուր կառ-
տաւորուած են թերթին ապարանն ու խմբ-
ագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ - ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ


ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 45

ՇԱՐԱՐ-

5 ՅՈՒԼԻՍ 1908



ՎԱՀԱՄԵՈՒԿ ՕՐ. ՆԵԿՏԱՐԻՆԷ ԱԶԱՐԵԱՆ



Մ Ա Հ

ՎԱՂԱՍԵՌԻԿ ՕՐ. ՆԵԿՏԱՐԻՆԷ ԱԶԱՐԵԱՆԻ

Նորածիլ վարդենիի մը նորաբողոքոյ ծաղիկը, ցուրս, անողով ձեռք մը կուգայ խել յանկարծ, թողով ցողունը իր սրմուքեան եւ ցաւին մէջ անմխիթար :

Ահա նոյն բանը վիճակեցաւ Ազարեան բարեհամբաւ գերդաստանին անցեալ շաբթու : Օր. Նեկսարինէ նորաբողոքոյ վարդ մըն էր, հագիւ բացուած բուրումնաւէս, որուն վրայ նայելով կզմայլէին ծնողքը, կը գուրգուրային վրան, ինչպէս նաեւ ամեն անոնք՝ որոնք մօտէն կը հանչնային, կը տեսնէին զինքը, այլ սակայն մահուան ցուրս ու սարսուզոցիկ ձեռքը յանկարծ եկաւ խել եւ սանիլ անգործէն, ծաղիկը բունէն, զաւակը մօրմէն, հոգին մարմինէն զատելով :

Ազն. Օր. Նեկսարինէ, այնքան համեստ, այնքան հեղահամբոյր, եւ այնքան կիրք, իր նկարագիրը զովեստ զովեստ, եւ իր բարեմասնութիւնները բերնէ բերան կ'արձագանգէր : Մեծ է ցաւը եւ անմխիթարելի է սուգը Ազարեան գերդաստանին, որով կը կորսնցնեն իրենց հոգեհասոյր դուստրը, փայլը ընթանիքին, բրոշուներ վանդակին եւ սերը իրենց սրտին : Ինչ դառն կորուստներ կան Աստուած իմ, որոնց մխիթարութիւնը հոս երկրի վրայ չէ կարելի փնտել, այլ վերը՝ Քու մօտը, Քու հաւաստիդ անուշ խաւերուն մէջ :

Յուդարկաւորութեան սրտանմիկ արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 27 Յունիս 1908, Պէոյիւֆէրէի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին : Ժամը 7 ին Շիրէքի 49 թիւ շոգեմաւր կամուրջէն փոխադրեց յուդարկաւորներու հասրնիւ հոծ բազմութիւն մը : Արարողութեանց կը նախագահէր Կ. Պատրիարք Սրբազանը, իր շուրջը ունենալով բազմաթիւ վարդապետներ եւ դպիրներ : Յաւատք եկեղեցական արարողութեանց, պատկառելի թափօրը կազմուելով, դագաղը՝ որուն ծոպերը եւ կերոնները կը կրէին պատկառելի անձնաւորութիւններ, առաջնորդուեցաւ եկեղեցւոյ բակը, եւ անկէ մինչեւ շուկայի ծայրը, ու հոն քառաձի շէնք մտնելակառնով մը մարմինը փոխադրուեցաւ գերեզմանատուն, որուն կը հետեւէին յուդարկաւորներու ստուար եւ ընտել բազմութիւն մը : Գերեզմանատան մէջ դամբանականգներ խօսուեցան, ուրկէ վերջ ներկայները իրենց ցաւակցութիւնները յայտնելով մեկնեցան իսկուր տաւորութեան մը տակ :

Խմբագրութիւնս իր խորին վեժակցութիւնը եւ ցաւը կը փութայ յայտնել Ազարեան բարեհամբաւ գերդաստանին եւ բոլոր պարագաներուն :

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

[ՆՈՐԱՎԵՊԻ ՊԵՍ ԲԱՆ ՄԸ]

Թատրոնէն վերադարձնուն, երկու բարեկամներ՝ Երուանդ Սիրունիկեան և Արշակ Տօտիկեան, զոյգ մը ապրողներ (viveurs) Բըթի-Շանի փողոցը սրճարանի մը մայթին վրայ եկած էին ծխել՝ իրենց սովորական նարկիլէն։ Լապրունայի խռմբը, այդ գիշեր, կտոր կտոր ըրած էր Ballo in Maschera և գրեթէ մեռցուցած էր անմահ վարպետին այդ աղւոր օրէրան։ Մեր երկու բարեկամները ներկայացման վրայ խել մը լիզի քննադատութիւններ ընելէն ետքը, հանդիսականներու մէջ գտնուող իրենց ծանօթ կիներուն վրայ շաղկարատած էին անվերապահ խոհականութեամբ մը և յանգած էին հոն ուր կը յանգին ամէն կենցաղասէր երիտասարդներ երբ կէս գիշերէն ետքը գլուխ գլխի տուած, կը խօսակցին՝ պառկելու ժամը կարելի եղածին չափ ուշացնելու համար։ Սիրային արկածներու փոխադարձ խոստովանութիւն մըն էր որ տեղի կունենար հիմայ այդ երկուքին միջեւ, խոստովանութիւն մը ուր գողտրիկ մեղքերը իրարու կը յաջորդեն առանց որ և է արձակումի սպասելու։

— Ես aventure մը ունեցած եմ, սկսաւ պատմել Երուանդ, որ երբէք մտքէս չեւար։

— Սա սարափին կնկան պատմութիւնը, անգամ մը պատմած ես, գիտեմ։

— Ան չէ ասիկայ և չեմ կարծեր որ ուրիշ անգամ լսած ըլլաս։

— Եթէ նոր բան է, ըսէ մօտիկ կ'ընեմ, վրայ բերաւ Արշակ, փոթորիկ մը դնելով նարկիլէին յատակը։

Աթոռը պատին կռթնցուց Երուանդ և մէկ ոտքը միւսին վրայ նետելով սկսաւ իր պատմութեան։

— Ասկէ քանի մը տարի առաջ առտու մը, Արնավուտգեղի նաւամատոյցին վրայ չոգենաւին գալստեան կ'սպասէի վար իջնալու համար։ Յանկարծ սրճարանին ետեւէն կանացի փէշերու քըսուռուտութիւն չըջիւնը ականջիս կը զարնէ և ետիս կը դառնամ եկողը դիտելու համար։ Աչք խածնող կին մըն էր

եկողը, ծանր և ճաշակաւոր արդուզարդի մը մէջ։ Իր հովանոցին տակէն դէմքը չի կրցայ լաւ մը տեսնել, բայց եթէ դատել հարկ ըլլար զինքը իր մարմնոյն մնացած մասերէն, այդ փէշերուն տիրուհին մանկամարդ կին մը ըլլալու էր ապահովապէս։ Տիամէլա-Բոնբատուրի բարկ բուրում մը անմիջապէս կռահել տուաւ ինծի թէ՛ նորեկը Արնավուտգեղի աշխարհին չէր պատկաներ։ Աւելի հաստատ ըլլալու համար ենթադրութեանս մէջ, աչք մը կը նետեմ ոտքերուն՝ որոնց chaussure-էն կարելի է ճշգրիտ գաղափար մը կազմել անծանօթ կնկան մը վրայ։ Նրբակերտ զոյգ մը կէս-վերնի և կէս-ուլեմորթէ պօթեր խիստ ճաշակաւոր կերպով կը գրկէին անծանօթիս տոտիկները, որոնք պզտիկ էին և բարեձեւ։ Այդ պատուանդանին վրայ կառուցուած մարմին մը սովորական, գոհիկ կնկան մը չէր կրնար ըլլալ։ Եւ տեսայ որ խաբուած չէի երբ տիկինը հովանոցը գոցեց չոգենաւ մըտնելու համար։ Բայց այդ գլուխը, Աստուած իմ, ես տեղ մը տեսած էի, այդ թիփը անծանօթ չէր ինծի, ո՛ւր, ե՛րբ։ Այդ աղւոր կնիկը առաջին անգամը չէ որ տեսած էի և եթէ չեմ սխալիր, խօսած ալ էի հետը։ Բայց ասկէ անդին, յիշողութիւնս առաջ չերթար և ի դուր կը կռահեմ ուղեղս լոյս ցատկեցնելու համար անկէ։ Գործ չունիս նէ փնտռէ, մէկ կերպով չկրցայ տակէն ելլել։

Շոգենաւը կը փակչի նաւամատոյցին և կ'սպասեմ որ ան ինձմէ առաջ անցնի։

Հանգրիճում տեսնելու էիր, Երուանդ, խելքդ կը կորսնցնէիր։ Կամըջակին մօտենալուն պէս՝ մարդուած, սերտուած շարժումով մը ձախ ձեռքովը աղէկ մը վեր կառնէ փէշը, թող տալով որ տեսնես սեւ թափանձիկ գուլպաներու մէջ բանտարկուած զոյգ մը սրունգներ որ սիգապանծ կերպով կը բարձրանան մինչեւ ծնրակապէն մատ մը վար։ Աւելցուր ասոր վրայ heliotrope տանթելազարդ ժիւղոնի մը հմայքը և բերնիդ ջրերը սրբէ։

Համոզումս համոզում էր, այս կինը Արնավուտգեղի ապրանք չէր։ Չեմ ըսեր թէ առանկ սրունգներ չի կան հոն, բայց ատանկ հանգրիճում, քիչ մը դժուար։

Աչքերս տոտիկներուն վրայ տնկած կը

հետեւիմ այդ զգլխիլ փեշերուն: Քոյնտի խուզերէն մէկուն մէջ կը սպրդի անծանօթուհիս և ես, բնականաբար, փութով կը նետուիմ այդ դռնէն ներս: Ես դեռ սեմին վրայ, աչքերը վեր կառնէ զիս դիտելու համար: Ա՛խ այդ նայուածքը, ծանօթ, բարեկամ նայուածք մը, բայց կը ճանչնամ զայն, առաջին անգամ չէ և ... Ինքզինքիս կուգամ: Դեռ չի նստած՝ անգամ մը աչքերս կը մխրճեմ իր նայուածքին մէջ և դիմացինս կը ժպտի:

— Մարիէթթա՛, դո՛ւն ես, կը հարցնեմ և ձեռքս կերկնցնեմ իրեն:

Իր ձեռնոցապատ թաթիկը ափիս մէջ դռնելով՝

— Ես քեզ տեսածիս պէս ճանչցայ, բայց էրիկ մարդերը այնքան շուտ կը մոռնան...

— Եւ կիներն ալ երթալով այնքան կաղաւորնան, կը յաւելում և քովիկը կը կծկտուիմ:

— Ինչպէ՛ս ես, Երուանդ, կը հարցնէ անգամ մըն ալ ձեռքը երկնցնելով ինծի:

Քամարային մէջ մենէ զատ ուրիշ մարդ չիկար և չիթներուս տանելով այդ աղւոր թաթիկը, քաղաքավարական և պարկեշտ համարոյ մը կը դնեմ այդ gris-perle կաշիին վրայ:

— Ինչպէ՛ս եմ, չեմ դիտեր, բայց ասկէ ետքը աւելի լաւ պիտի ըլլամ, քանի որ նորէն կը գտնեմ զքեզ:

— Քառասունըութ ժամուան համար:

— Մի՛ ըսեր, Մարիէթթա:

— Հաւատա, վաղը չէ միւս օր կը մեկնինք նորէն Օտէսա, և ասոր համար երէկ դիշեր մնաք բարովի եկած էի էրկանս մէկ ազգականին որ Արնավուտգիւղ կը բնակի:

Հիմայ, քեզի ըսեմ թէ ով էր այս կնիկը: Ամբողջ ուսման մըն է, աղէկ մտիկ ըրէ, պատուիրեց Երուանդ իր բարեկամին և նարկիլէին համար կրակ մը ապսպրելով սրճաբանին մանչուն, սապէս շարունակեց իր պատմութիւնը:

— Ես այս կնիկը դեռ քսան տարու աղջիկ եղած ժամանակէն կը ճանչնայի: Աղեքսանդրիս եղած ժամանակս, մեր վերի յարկի աբարթըմանին մէջ կը բնակէր իր ծնողքին հետ, որ չնորհքով յոյն ընտանիք մըն էր: Այս ըսածս տասը տարի կա: Այն ժա-

մանակ հիմակուան չափ աղւոր չէր, առանց սակայն տգեղ աղջիկ մը ըլլալու:

Մարմինը աւելի նիհար էր և անոր կրորտեղուանքը դեռ իրենց ամբողջ կանացի շնորհները չէին ստացած: Ծլվուուն, թեթեւ հոգի, ցատկաւոր, ժպտուն, սիրաբանող էակ մըն էր Մարիէթթա, որ շատ չէր յոգնեցներ ինքզինքը, դէմը ելլող երիտասարդին խելքը գլխէն առնելու համար: Տեսակ մը ժպտախառն նայուածք ունէր, որուն գերին կըլլայիր եթէ երբէք հաճէր այդ թակարդով քթէդ բռնել:

Այդ թակարդին ծայրէն կախուած մնացի վեց ամիս շարունակ, և եթէ այսպէս տեւէր, ապահովապէս կեանքս ամբողջ այդ վիճակին մէջ պիտի մնայի եթէ օրին մէկը Օտեսայէն մեծահարուստ Յոյնի մը տղան չառնէր չի տանէր դրացնուհիս:

Ուստի վաղեմի ծանօթներ էինք իրարու, և շոգենաւը դեռ կամուրջ չեկած կարծես իմ նախկին Մարիէթթա տէր որուն հետ կը խօսէի:

Կորսուած գանձի մը վերստացումը այնքան հաճոյք չպիտի պատճառէր ինծի՝ որքան այս հանդիպումը, որ աւա՛ղ, շատ չէր կրնար քշել: Մինչեւ կամուրջ քաղուածքը ըրինք մեր երբեմնի սիրոյն: Ինչ անուշ է վերյուշումը նախկին յարաբերութիւններու, երբ մանաւանդ զգացումներդ դեռ վառ կը մնան և դիմացինդ հիմա հազար անգամ աւելի գեղեցկացած է քան երբեմն: Երբոր կնոջ մը համար աղւոր է կրսեմ, գիտես Երուանդ որ ճաշակա աժանի չեմ ծախեր, ուստի Մարիէթթան այնքան աղւոր էր որքան մարդս կրնայ ինքզինքին մաղթել ... աստանկ հոմանի մը ունենալու համար:

Առիթքն oqsnegh'f, բացատրութիւնը, մինակ մենաշնորհը չէ liquidation ընող խառնութներուն: Ամէնէն շատ սիրոյ մէջ է որ առիթը փախցնելու չէ իրականութիւն տալու համար փափաքներուդ:

Հետեւաբար, առատօրէն complimentներ չապլեցի իր աղւորութեան մասին, յիշեցուցի իրեն մեր Աղեքսանդրիոյ երբեմնի տեսուածիւնները, և ամբողջ բանաստեղծական աւելնա դրի նորէն թունդ հանելու համար այդ սիրտը որ, երբեմն ինձ համար բաբախած էր:

Քաջալերող յուսատու հովմբ կար իր խոսուածքին մէջ, և իր այս ընթացքէն սիրտ առած, ժամադրութիւն մը խնդրեցի իրմէ միւս օրուան համար:

— Գիտես, Մարիէթի, թէ որքան կը սիրէի զքեզ և անկէջ ի վեր, կերդնում քեզի, ոչ մէկ կին չէ յաջորդած քեզի իմ սրտիս մէջ, դուն անոր թագուհին կը մնաս մինչեւ այսօր, հիմայ որ քաղաքը նորէն զմեզ դէմ առ դէմ կը դնէ, ապացոյց է որ երբեմնի սէրդ սուտ չէր, և վրաս այնքան վստահութիւն ունիս՝ որքան ունէր այն ատեն: Դեռ այն համբոյրներուն համը չըթնեցողս վրայ է որ չէ կորսուած ուրիշ հպումներու ազդեցութեան տակ: Նորոգէ զանոնք անգամ մըն ալ, մանաւանդ որ հիմայ զգուշանալու պատճառներ չունիս, կարգուած ես և ազատ, բարի կամեցողութիւն մը բաւական է վարձատրելու համար զգացումներս, որոնք տաւր տարիներէ ի վեր բան մը չեն կորսնցուցած իրենց թափէն, ընդհակառակը՝ աւելի բուռն կերպով կը չարարեն դիտ քու ներկայ գեղեցկութեանդ փթթումին ի տես: Չէ մ'ըսեր, հոգիս, և թող տուր որ անգամ մը եւս — և թերեւս վերջին անգամ ըլլալով — ցոյց տամ քեզի թէ՛ որքան մեծ, որքան անեղբէ համար ունեցած պաշտամունքս:

Երկար չընեմ, Երուանդ, ժամերով լեզու թափելէս ետքը, վերջապէս յաջողեցայ ժամադրութիւն մը խել այդ բոսոր շրթներէն:

— Բարեբաղդաբար ամուսինս հետս չէ: Կեսուրիս հետ Եւրոպայէ վերադարձնուս հանդիպեցանք Պոլիս, ուր հինգ օր կենալէ ետքը վաղը չէ միւս օր կը մեկնինք, ապա թէ ոչ կարելի չպիտի ըլլար ընդունիլ ժամադրութիւնդ, որու կը հաւանիմ միայն և միայն քեզի հասկցնելու համար թէ՛ երբեմնի սէրս կեղծ չէր, ինչպէս նաեւ հիմակուանը: Առաջին անգամն է որ պարտականութիւններէս կը շեղիմ, վստահ ըլլալով որ՝ պատուաւոր մարդու մը հետ գործ ունիմ, որ գիտէ գընահատել այս տեսակ զոհողութեան մը բարձրութիւնը:

Այս խօսքերը հազիւ լսելի կըլլային ականջիս, այնքան բուռն էր ներսիդիս աղմուկը: Սիրտս՝ զգայարանքներուս միացած

միաձայն կերգէին վաղուան հաճոյքին Հրաշափառը:

— Ուրեմն վաղը ... բայց ո՛ւր:

Ականջն ի վար կը ծռիմ և կ'որոշեմ տեղը ուր պիտի գտնէինք զիրար:

— Ժամը ութին:

— Այո՛, ճիշտ ութին:

Բաժնուած միջոցնուս այնպիսի կերպով սեղմեց ձեռքս՝ որ վաղուան երանութեանս վրայ ալ կասկածիլ ներելի չէր, և այդ հոգեկան վիճաս պատճառ եղաւ որ գիշերն ամբողջ աչքերս չի կրցայ գոցել:

(Մնացեալը գալ անգամ)

6. ԱԼՓԻԱՐ

ՓՇՐԱՆՔՆԵՐ

* * * Երեսասարդութիւնը եւ կամքը կրնան ծայրայեղութեանց դիմագրել, սակայն բնութիւնը իր վրէժը կ'առնու լռից, եւ այն օրն որ կ'որոշէ նորոգել իր ոյժը, կամքը կը մեռնի ոյժին սպասելու եւ նորէն զայն չարաչար գործածելու համար:

* * * Սերը միայն նախանձ կուսայ, շնորհ մը, բարեսիրական խօսք մը, գեղանի բերնի ժպիտ մը ինչ ինչ մարդերու կրնայ մինչեւ իսկ կասաղի նախանձ մը ներհեծել:

* * * Սերը անմեկնելի գաղտնիք մ'է, այս մասին պէտք չէ տարակուսիլ, քեւեւ աշխարհս ինչ ինչ եզրանքով, քուսառութիւններով, պիտի ըսեմ իսկ քեւ ձանձրոյթներով երջապատած է սերը, քեւեւ ապաւանդող նախապաշարունակներու լեռան մը ներքեւ քաղուած է ան, բայց եւ այնպէս այս զգացումը, այսինքն սերը, բուռն եւ նախապաշարային սերը՝ երկնային օրէնք մ'է, օրէնք մը որ աւելի երկնից վերելք ի կախ կեցնող օրէնքին պէս զօրաւոր եւ անխնայալի է, մեկ խօսքով՝ սերը երկնային երջանկութեան հաւատքն է:

* * * Կան կիներ, որոնց բնաւորութեան լաւութիւնն եւ սրտին անկեղծութիւնը չեն քողուր որ մի եւ նոյն ժամանակ երկու կամ աւելի սիրողներ ունենան. այնպիսի կիներ գտնելու համար Դիոգիւսի լապտերին կը կառօթին:

Իզմիր

ՅՈՎ. ՀԱՅՐԱՊԵՏԻԱՆ

ՀՈՍ ՀՈՍԻՆ ՆՕԹԵՐԸ

ԻՆՉ ԱՆՑԱԻ ԴԱՐՁԱԻ ԱՅՍ ՇԱԲԹՈՒ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ, ՈՐ ՇԱԲԱԹԷ ՄԸ
ԱԻԵԼԻ ԶԱՊԻՐ, ԱԻԱՂ:

Գրիգորներու անունն էր անցեալ շաբաթ օր:
Անունը՝ Գրիգոր Մարգարեանի, Գրիգոր Մալխասի, Գրիգոր Մէհէհերեանի, Գրիգոր Զուլհանեանի, Գրիգորիս Վ. Պալագեանի, Գրիգոր Զօպանեանի, եւ դեռ աշխարհիս բոլոր Գրիգորներուն:

Կիրակի օր 10000 շիշ զագաս եւ 9578 շիշ իրսի սպառեցաւ Գրիգորներու տունին մէջ եւ 10000 օխայի չափ ալ ֆօնսան կերուեցաւ:

— Անունովնիդ ապրի՛ք . . .

(Իբր թէ կարելի ըլլար առանց անունի ապրիլ),
եւ, հօ՛ւփ, զաւաթ մը իբսիք եւ հաս մը ճօնատն:

Գրաւ կը դնեմ թէ՛ անունի տօնախմբութիւնները հաստատուած են դիտմամբ՝ Հաճի Սարիմին, Հաճի Պէքիրին, Թօգամլեանին, եւ դեռ աշխարհիս բոլոր քաղիքորէներուն . . . փարա վասկլցնել տալու բարի դիտումով:

×

Գրիգոր էֆ. Մալխաս մեծանուն գրագէտը սկսաւ ժեսքիզիւլասիօնի և առողջանութեան դաս տալ հայ վարժարաններու մէջ, սկսելով Բանկալթիի Վիէննացիներէն:

Մեծայարգ քննադատը Գոնսէրվաթուարի դասընթացք մը պիտի հիմնէ մեր մէջ, սովորեցնելու համար թէ՛ ինչպէս պէտք է արտասանել մրցանակաբաշխութեանց ճառերը, ֆրանսերէն, հայերէն:

Նոյնպէս պիտի դասախօսէ մեր քարոզիչ վարդապետներուն՝ անոնց ժեսքերը ուղղելու համար:

Գրիգոր էֆ. Մալխաս որ ատենօք կը գոհանար լոկ Հ. Ղազիկեան Վ. ի սխալները սրբագրելով, հիմա պիտի ջանայ սրբագրել նաեւ մեր խօսելու շարժումները:

Բարիգի Գոնսէրվաթուարը մտադիր է կանչել մեր սիրելի գրագէտը՝ անո՛ր յանձնելու համար դասարանը տիկին Սառա-Պէռնաուի, որ հրաժարեցաւ:

×

Պանդոկներէ մէկ քանին այս ամառ սանճիէ բռնուեր են:

Մէկ մասը պարապ է:

Այն պանդոկները, որոնք անցեալ տարի այս ժիշոցին լեցուն էին, այս տարի . . . ճանճ կ'որսան կոր:

— Ինչ է արդեօք պատճառը, հարցուցի քանի մը պանդոկատէրերու, որոնց քիթէն ինկողը քառսուն կտոր կ'ըլլայ:

— Այս ձմեռ շատ վաճառականներ սընանկացան, պատասխանեցին ամէնքը համակարծիք:

Ուրեմն ձմրան առեւտրական սնանկութիւնները պատճառ կ'ըլլան, որ ամառը . . . պանդոկատէրերէ ոմանք սնանկանան իրենց կարգին:

Գնալըի Պ. Շահապը այս կարծիքէն չէ՛ սակայն:

— Պ. Կավուօ՛շ, գարնան մէջը առաջին անգամ դուն եկար մեր պանդոկը և պանդոկիս բաղդը գոցեցիր, ոտքդ կոտրեր տե՛րս պանդոկս չգայիր . . .

Վա՛հ Շահապս վա՛հ:

×

Անուճներու հոգեբանութիւնը վերնագիրով ֆանթեզիիս մէջը ըսած էի:

«Տիրացուները կնամու ու եսապաշտ կ'ըլլան»:

Ցաւով կ'իմանամ թէ Տիրացուները այս մասին սաստիկ կը բողոքեն ինծի դէմ:

— Մենք կնամու ու եսապաշտ չենք . . . կը պօռան անոնք:

Խօսքս ետ կ'առնեմ անմիջապէս:

Տիրացուները կնամու ու եսապաշտ չեն եղեր:

×

եռածայնի յարութիւնը :

եռածայն յարեալ ի մեռելոց :

եռածայնը որ Կրօն. ժողովի հրամանով մինչեւ անցեալ շաբթու մեռած ու թաղուած էր, անցեալ կիրակի, Ս. Գրիգոր Լուսաւորիչի տօնին առթիւ, Ղալաթիոյ եկեղեցիին մէջ փառաւորապէս յարութիւն առաւ, գերեզմանաքարը վրայէն նսեցով :

Բոլոր տիւրացուները պար բռնեցին :

Այս առթիւ բոլոր դպրապետները՝ **Օլասը-րախի**ի օրը տօնեցին :

Լեւոն Զիլինկիրեան որ զլիսուն մագերը փեռած էր եռածայնին մեռած օրը, եռածայնի յարութեան առթիւ իր բոլոր փեսոսուած մագերը մէկիկ մէկիկ ժողովեց եւ զլիսուն վրայ փակցուց վերսին :

— Եռածայն յարեալ . . . կը ցնծերգէին ամէն-քը՝ կաթով թէյը խմելով (այս տարին) եւ կէվրէկ-ները կրծելով :

— Եռածայն յարեալ . . . կ'երգէր Սմբատ Քէ-սէնեան :

— Օրհնեալ ըլլայ յարութիւնը եռածայնի, կը պատասխանէր ճարութիւն Սինանեան՝ իր առնելիք մէկ ոսկիին յարութիւնը յիշելով :

— Կեցցէ՛ եռածայնը կը կրկնէր Ղալաթիոյ ժա-մուն ժամկոչները :

Դրան առջին կայնող մուրացկաններն ալ ուրա-խութեան մէջ են :

— Գոնէ՛ եռածայնի առթիւ աս ու ան եկեղեցի կուգայ եւ մենք սանկ նանկ փարա կը շահինք, կ'ը-սեն անոնք, որովհետեւ, ինչպէս զիտէք, այս երկի վրայ ամէն մարդ ի՛ր շահը կը մտնայ :

Երգեցողներն ալ իրենց ուրախութենէն ընելիք-նին շուարած են. ասեն ասեն սխալ-մխալ նօթեր դուրս կուտան :

— Եռածայն յարեալ . . . եռածայն յարեալ . . . Կը խնդրուի Կոմիտաս վ. էն որ եռածայնին այն ժոյճը նորին չելլայ խանգարել :

×

Իմ անձնական դերձակ՝ Պ. Երուանդին խանութը ա՛լ դերձակի խանութ մը ըլլալէ դադարեցաւ :

Ա.մէ՛ն բան կ'ըլլայ կոր հոն, բացի . . . բրտէնկօթէ :

Պ. Պարոնեան պարի դաս կուտայ հոն, մինչ Պ. Եր. Միրիճեան քաւրիլը տիրիժէ կ'ընէ :

Պ. Դիրգոր Թօլայեան ջութակի դաս կու-տայ եւ դաշնակով պարողներուն կ'ընկերա-նայ, — Կալիօս-բոլֆան, — Կալիօս-ամու-րեօն Սինանեանին եւ Le bonheur perduն զարնելով միայն ու միայն :

Պ. Երուանդ Թօլայեան՝ հոն դերասանցու օրիորդները եւ պարոնները կ'ընդունի :

Ահմէտ Ֆէհիմ էֆ.ի թատերախումբին

յուշարարը հո՛ն կը հանդիպի՝ ցորեկուան ճաշը ընելու համար :

Ու յաճախորդները կըսպասեն՝ իրենց ր-սկեկօթին :

×

Հանրագիտակի խմբագրատունը :

Չորս պատերուն վրայ կը տեսնեմ ցանկեր՝ թուանշաններով ծածկուած. — Ոսկին մե-նիսի վերածելու եղանակը, Եկամուսներու հաճիւր, Ոսկիին եւ մեհիսին տարբերութիւնը, Օտար դրամներու օսմանեան դրամի վերա-ծումը . . . :

Ուրախալի է որ եթէ Հանրագիտակի խմ-բագրատան մէջ դրամ չկայ, գոնէ դրամի խօսքը կայ . . . պատերուն վրայ :

Ահ, սա՛ Լիլան . . . ի՛նչ blagueur է որ :

×

Բըթի-Շանի ամփիթատրոնը :

Միջնարարի մը միջոցին, պատուհանի մը կըթնած, ոտքի վրայ կը քնանամ՝ կաթնա-վաճառի ձիերուն պէս, անկողնիս փափկու-թիւնները երազելով :

— Բարե՛ւ, կ'ըսէ ինծի Գուժ-գաբուցի փաստաբան մը որ . . . L'art de se faire aimerն կը կարդար :

— Աստուծու բարի՛ն, կը մրմնջեմ, ի՛նչ-պէս էք :

— Երէկ գիշեր օմառ կերանք, կը պա-տասխանէ Գուժ-գաբուցի փաստաբանս, գօլիֆ ունիմ . . . :

Օմառ, գօլիֆ . . .

Ֆրանսերէնէ հայերէն բառգիրք մը կը բանամ, ուրկէ կը հասկնամ թէ պարոնը ե-րէկ գիշեր բասախօզ է կերեր, որուն վրայ սանճիէ բռնուեր է :

Շա՛տ աղէկ, սիրելի փաստաբանս, չա՛տ ուրախ եմ որ երէկ գիշեր բասախօզ մը կե-րար, ինչ որ կը նշանակէ թէ սանկ-նանկ մարդ մը չես, քանի որ բասախօզ ուտելու կարողութիւնը ունիս, եւ չա՛տ կը ցաւիմ թէ այդ բասախօզը քու փափուկ ստամոքսիդ սանճի է պատճառեք . . . :

Բայց, Աստուծո՛ւ սիրուն, ինծի ի՛նչ քու բասախօզ կերած ըլլալդ եւ սանճի ունենալդ : Միթէ բժիշկ իցեմ ես :

×

1909 ին հրատարակելի տարեցոյցներ լոկ մեր մէջ .

Ամենուն տարեցոյցը, Թէոդիկին :

Ս. Փրկչի տարեցոյց, մեր Հիւանդանոցին :

Պաղատարեան տարեցոյց, նոյն անունով որբանոցին :

Նեան-Պապիկեան տարեցոյց, նոյն անունով գրատունէն :

Լիլա տարեցոյց :

Կալուօ տարեցոյց :

Նեան-Պրոպիեան տարեցոյց, Զարեհ Պէրպէրեանին :

Կը լսեմ թէ Մանգուսե ալ տարեցոյց մը կը հանէ եղբր :

Օննիկ Արզուման հաստատապէս մտադիր է տարեցոյց մը հանել :

Եւայլն, եւայլն, եւայլն :

Կ'երեւի թէ 1909 ին՝ տարեցոյցներու տեղատարափի մը մէջ պիտի խղճուինք :

Եւ մտածել որ ընթերցողներուն թիւը միշտ 1500-2000 է :

Օր պիտի գայ որ ընթերցող գլուխ ... տարեցոյց մը պիտի տպուի :

Ահա՛ այդ օրը ... եթէ գրագէտները չպիտի հարստանան, բայց գոնէ գրականութիւնը յառաջդիմած պիտի ըլլայ :

×

Տասներեք տարու դպրոցական աղջնակի մը քսի անգամ մը .

— Օրիորդ, ձեզի կը պատահմ, առանց ձեզի չեմ կրնար ապրիլ :

Ու տասներեք տարու դպրոցական աղջնակը պատասխանեց ինծի՝ յոգեբեր վեր առնելով արհամարհոս .

— Ա՛հ, պարո՛ն, չեմ հաւատար ձեր խօսքին, ամեն մարդ ալ ինծի ա՛յդպէս կ'ըսէ :

Միամեութիւն, ո՛րք գացիր :

×

Մենք լալկան մարդերը կը սիրենք :

Ասիկա կ'ըսեմ, մի՛շտ յարգելով հանդերձ յիշատակը Միսաք Մեծարեանցի, մեր վաղամեռիկ զգալուն բանաստեղծին :

Ի՛նչ ատենէն հաւանաբար արձան մը պիտի կազմենք անոր շիրմին վերեւ :

Լա՛ւ, չա՛տ լաւ :

Պետրոս Դուրեանի գերեզմանին վրայ արդէն կոթող մը կանգնեցինք :

Լա՛ւ, չա՛տ լաւ :

Բայց ինչո՞ւ Պարոնեանի արձանը չկանգնեցինք անոր գերեզմանին վրայ :

Որովհետեւ անիկա չլացա՛ւ, այլ ... խնդաց :

Վաղը, ո՛վ իմ սիրելի վահան Փափաղեանս, երբ դուն ալ մեռնիս, քո՛ւ ալ արձանդ պիտի զանց առնեն կանգնել շիրմիդ վրայ, որովհետեւ դուն ալ, Պարոնեանի պէս, չլացիր, այլ խնդացիր :

Ինչո՞ւ, Լիլա՛, վաղը երբ — Աստուած ուշէն տայ — մեռնիս, քեզի ալ վսեմ տապանաքար մը չչինեն, ա՛յնչափ փառաւոր եւ ծանր, որուն տակը չկարենաս ո՛չ իսկ ... շարժիլ :

(Մանօք. — Այս բանը դիտմամբ դիտել կուտամ, որպէս զի իմ...արձանս ալ չմոռնան) :

×

Հիւանդանոցի անգլիացի երեք նրսերէն երկուքը հրաժարականին տուին :

Բայց երրորդ նրսը իր հրաժարականը չտուաւ :

Արդեօք պատճառը ա՛յն է որ երրորդ նրսը չա՛տ սիրեց ... մեր Հիւանդանոցը եւ մեր հիւանդները :

Դադանի՛ք :

×

Ուրախառիթ պարագայ մը :

Սիրուած գրագէտ Պ. Օննիկ Զիթիէ-Սարափի Միամիտի մը արկածները սպառեւ են բոլորովին :

Հեղինակը, որուն քովը ո՛չ իսկ օրինակ մը մընացած է, պատճառ է գնելու անոնցմէ, որոնք բարեացակամութիւնը պիտի ունենան իրենց հասցը վերստին ծախելու իրեն՝ կրկին գինով :

Դիմել Նշան-Պապիկեան գրատունը, Էսկի-Զապիիէ :

×

Աղամեանի կապոյտ բանթալօնը, որուն վրայ դամբանական մը խօսեցայ անցեալ չաթու Մանգուսեու, կը բողբէ ինծի դէմ, ինչու որ պէտք եղած լրջութեամբ չէի վարուեր իրեն հետ :

Աղամեանի պարագաները, որոնց քովէն գնուեցաւ Աղամեանի կարս-րոպը, կը բողբէ քեզնեմը Շահէնի դէմ՝ ըսելով անոր .

— Դուն մեր Աղամեանին բանթալօնը կը խայտառակես կո՛ր:

Վերը, երկինքին մէջ, Աղամեան կուլայ, իր բանթալօնին վրայ:

×

Կիրակի օր Դպրաց դասը գումարուեցաւ Ղալաթիոյ խորհրդարանին քովի սրահին մէջ:

Ստեփան Ակայեան՝ Աստուածաշունչի չափ երկար ճառ մը կարդաց, ուր յայտնեց իր դիտողութիւնները և կարծիքները:

Այսուհետեւ Ղալաթիոյ Դպրաց Դասը՝ Ստեփան էֆ. Ակայեանի երաժշտական արուեստին մասին յայտնած կարծիքներուն և դիտողութիւններուն համաձայն պիտի շարժի:

×

Բարեկամներէս մէկը, — որ զիս չափազանց կը սիրէ և միմիայն իմ բարիքս կ'ուզէ, — անցեալները ձեռքը անցուցեր է թերթ մը, ուր յօդուած մը ունէի:

Բարեկամս անմիջապէս թերթին կողքին նայեր է և խոշոր գիրերով կարդացեր է ՁԵՆԻԹ անունը ...:

Անմիջապէս քովիներուն դարձեր է՝ ըսելով.

— Ծօ՛, գիտէ՞ք, Կավոօշը իր արտադրութեանց սահմանը ընդարձակեր է, հիմակ ալ բացի Հանրագիտակէ, Մանգումէ և Լոյսէ, Ձեմիք անուն թերթի մըն ալ կ'աշխատակցի կո՛ր ...:

Դովիները կը մարին խնդալէ:

— Ծօ՛, աղէկ նայէ՛, ատիկայ թերթին անունը չէ՛, այդ ՁԵՆԻԹ ժամացոյցներուն ռեզլամն է:

Սիրելի բարեկամիս ա՛յնքան ուրախութեամբ ձեռք անցուցած թերթը Հանրագիտակն էր, որուն կողքին վրայ ինչպէս գիտէք Ձեմիքի ծանուցումը կայ մեծատառ:

×

Այս շաբթուան սկսեալ Ահմէտ Ֆէհիմ էֆէնտիի թատերախումբը, — սրամիտ քըրքիներու, խօլ ծիծաղներու մեծ Վաճառատունը, — Սկիւտար, Իճատիէ, Թէփէի իր մասնաւոր թատրոնը ամէն շաբաթ գիշեր պիտի սարքէ աման երեկոյթներ, մերձեանլի բոլոր քսակներու համար:

Ահմէտ Ֆէհիմ էֆ. չուզեր որ յարգելի Սկիւտարցիները զինքը վայելելու համար նիւթական մեծ գոհողութիւններու յանձնառու ըլլան:

— Արուեստին սիրոյն մենք քիչ դրամով ալ կը գոհանանք կըսէ անիկա:

Ամէն շաբաթ գիշեր, կատարելապէս Բարիզեան սիւթէմով Spectacle coupé մը, մէկ վարագուրնոց զաւշաներ, իբր Inter-mèdes ունենալով երգիչներ և երգչուհիներ, իրենց զուարթ եւ մասնաւորապէս «ընտանեկան» ռէպէրթուարին մէջ:

Կըսուի թէ Պ, Աշոտ, որու քանի մը տարի առաջ երգած Քեֆիլը ո՛չ ոք մոռցած է, պիտի մասնակցի ներկայացումին՝ իր շէնչող տուէքթոներով:

Նոյնպէս կըսուի թէ՛ Պ. Երուանդ Թօլանի պիտի ներկայացնէ իր գրած մէկ կատակախաղը՝ որ բացարձակ surprise մը պիտի ըլլայ:

Շաբաթ գիշեր կը տեսնուի՞նք:

Աչքը լոյս ամէն անոնց որոնք կը սիրեն խնդալ:

×

Այս տղերք գրողը կը խնդրէ իր սիրելի ընթերցողներէն եւ ո՛չ նուազ սիրելի ընթերցողներէն, որ երբ սրամիտ լուր մը կամ սրամիտ ըսելիք մը ունին, անմիջապէս դրկեն զայն իմ հասցեիս, (Բերա, Մեծ-փողոց, թիւ 65) որպէս զի արձագանգեմ զայն անմիջապէս Հոս-Հոսի նօթերուն մէջ:

Ա՛յն լուրերը եւ ըսելիքները որ սրամիտ չեն, չեն ընդունուիր:

Զհրատարակուած ձեռագիրները եւ կը վերադարձուին:

Կը խնդրուի նաեւ ... ոսկի մը կցել իրենց նամակին, որպէս զի ... կես առ կես բաժնեմ խմբագրապետին հետ:

Honni soit qui mal y pense !

×

— Կավոօշ, կ'ըսեն թէ դուն բոլոր կիները կը ճանչնաս եղեր, սա՛ հմայիչ կնոջ անունը ի՞նչ է արդեօր:

— Այս կնոջ անունին կ'ըսեն ... քը՛սդ քը՛սդ:

ՀՈՍ-ՀՈՍ

ԿԱՄ

ԿԱՎՌՕՇ

ԵՒ ԿԱՄ

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

“ՍԱՏԿԻՍ ԱԼ ՆԷ ՉԵՄ Ի ՏԱՐ ...”

Ձիս խաչը չէք հաներ անշուշտ, երբ ըսեմ թէ եկած հասած օրիորդի մը մայրն է ըսողը «սատկիս ալ նէ չեմ ի տար ...»:

Մեր մէջ, մանաւանդ թերուս ընտանիքներու խօրը, այնպիսի սիրային խնդիրներ կ'անցնին, որոնք Մօբսսանի մը գրչին տակ կրնան մէկ մէկ յուզիչ վէպեր դառնալ: Մեր մութ խաւերուն աննշան խորշերուն մէջ պէտք է մարդ պտըտկի և մօտէն ուսումնասիրէ այն աւերիչ, քանդիչ արարքներն՝ զորս կը կրկնուին խակ ու բութ ծնողաց կողմէ, և որոնց ենթակաները կոյր զկուրայն կը զոհուին օրային և կամ ամուսնական հակառակութեանց և արգելքներու երեսէն:

Միջակորեար դասակարգին մէջ եռեսուն տարեկան օրիորդը ստրուկն է իր մօրը և հօրը ճիրաններուն ներքեւ, անիկայ պարզ գործիք մըն է, սովորական մեքենայ մը, որ պաշտօն ունի լուսէ լուս սպասարկութիւնը ընել իրեններուն, ամուսնութեան համար թողունք առաջարկը, նոյն իսկ գաղափարը և անոր յայտնութիւնը, կրնայ քէմիք խօշաֆի դարձնել ենթական:

Եւ որպէս զի մեր այս կարճ տեսութիւնը կատարեալ համոզում մը գոյացնէ՝ ձեր մէջ, և գիտնաք թէ ինչ որ կը գրենք՝ իբր զաւելտական, իրականութիւնն իսկ է և ոչ թէ մտացածին չինծու յերիւրանք, ուստի մէկը թող կարդայ՝ դուք մտիկ ըրէք:

Ծովեզերեայ գիւղերէն միոյն խիտ առ խիտ տուններէն մին, այն կարգի տուններէն՝ որոնց վարագոյրները ձուրթ ճերմակ կըլլայ միշտ, ինչպէս նաեւ վարի բակը մաքուր, ներս մտնողը կօշիկները դուրսը կը թոթուէ և սանդուխներէն վեր ելած ատեն ընական կճրտուկ մը խառնիճաղանձ միւզիք մը լսելի կըլլայ անպատճառ, այնքան հին ու չոր կըլլան տախտակները: Երբ առաւօտուն փողոցէն անցնիս՝ ճեկկեառի սրունգներու և կանգունը տասը փարանոց տանթէլներու էքսքօզիսիօնէն, որ աչքիդ առջեւ կը պարզուի դուռներու սեմին վրայ, ցերեկը՝ ճիւղեր թա-

վաւիի հոտը կուգայ քթիդ, իսկ երեկոյեան դէմ կամ ուշ ատեն երբ անցնիս՝ անպատճառ այր և կնոջ կռիւները կը լսես, որոնք հայհոյութիւններով կը վերջանան ... կէս գիշերը անցած:

Ահա այս կարգի տուններէն միոյն փողոցի վրայի սենեակն է տեսարանը: Քսանէն քրսան և հինգ ճորճոր պարպար օրիորդ մը, թուխ՝ զերդ ածուխ, չոր, ոսկրուտ, միջահասակ, մատներուն ծայրերը ասեղէն ծակ ծակ, իսկ ափերուն մէջը կոշտ կապած, քրուէթօն պասմա քօսթիւմը կռնակը սեւ սակռէն սկառքիներով պաշտմալը գուլպաներ, որոնց վերերը քաշուկներ կան՝ փոխան ժառըթիէռի, անկանոն կերպուած բուտոան դէմքին վրայ, և վիզը ինչպէս սովորութիւն է այդ կարգի օրիորդներուն, սեւ խաւիքէ ժապաւէն մը քոմլետի նեօ մը եղած, մազերը խառնախոնճօղ բիւրիւզ բիւրիւզ աչքին վրայ հովանի, կուրծքը քառէ բացուած ազատ հոլանի:

Իսկ գալով մօրը՝ որ նստած անկիւն մը չալը ֆասուլեասի կստկէր. պասմա բէշ մը վերը վարը մէկ, մէջքէն գոտիով մը սեղմուած, կէս բապուճ, ոտքերը մէկը տնկած միւսը տակն առած, ատեն ատեն աղջկանը երեսը կը նայի և յօնքերը կը պոստէ:

— Քա երկու լուսըդ վազելիք բիճ, տահա սուռաթըդ պիտի կախես ... տահա ինատըդ պիտի քշես քա ... կըսէ մայրը աչքերը դուրս ձգած:

— Ես քեզի զարար մը ունիմ տուտուս, ինչո՞ւ ասանկ կըսէք ... սըտեղը եկեր նըստեր եմ իշտէ ...

— Ատանկ մուռն նստելդ ալ ինծի նիսպէթ կուգայ կոր իշտէ ...

— Է՛յ նասըլ ընեմ, բերանս բանամ նէ խառնախսի կըսես կոր, սուս նստիմ հիյէթլէնմիշ կըլլաս կո՞ր ...

— Քա, քեզի սըխըտարը ըսեմ քի, բամպակը անկճէդ հանես, ատ տղան չպիտի առնես, չպիտի տանք, տահա ...

— Բա տուտու՞ւս, ի՞նչ էք տեսէր տղուն վրայ քի չէք խտար կոր, կը տեսնաք կոր քի լէօպէթճիի ֆէնէն եւ դառցէր ալիւրթ, աս ի՞նչ տիւշմանութիւն է քի կընէք կոր ինծի...

— Էօմրիւս մէջը ասանկ ռըյրըխութիւն չէի տեսէր, մեր վախթը նէ՞ միւնքիւն քի կարգուելու լախըտը ընէինք... ոսկոր-նեռնիս կը կոտորսէին տէ տէրինիս կը հագ-նէին... հիմա, պաշապաշ նստեր ես տէ իլլէ ան տէլիխանլըն կուզեմ տէյի տիրէնմիշ կըլլաս կոր... Փառաշ մը պըռէքիմ...

— Մէկ մարդ մը բանի մը դէմ կը կե-նայ ամա՛, տեղը ըլլալու է, խուզէթլի պատ-ճառներ ըլլալու են, տա տղուն վրայ ի՞նչ կը տեսնաք կոր քի դէմ կուգաք կոր...

— Ան մեր գիտնալիք պան նէ, չպիտի տանք իշտէ, տահա՛, Մերկէլ աղան ալ ա-նանք կըսէ կոր, հէմ գիտցած եղիր որ օր մը մազերդը թեւը պիտի փաթթէ տէ անանք պիտի ծեծէ, ըսե՛մ տէ...

— Մեռցունէք պիտի ինծի տուտու, սիր-տերնուդ տէրտ պիտի ըլլայ...

— Սատկիս ալ նէ չպիտի տամ...

— Անխըտար կըլլամ կոր քի ինքզինքս ծովը պիտի նետեմ...

— Օ՛հ... հիշ բան չիյտես կոր, զաթը վրադ դուրս է տուեր, ծովին պանծոն բէք աղէկ կուգայ...

— Հօրը պիտի նետուիմ գիտցած եղիր տուտու, չախա չէ...

— Գուզում Ուստիկ, տիպը երթաս նէ, հերու խովա մը ինկաւ հետդ վեր հանէ...

— Դուք չախա կը գիտնաք կո՞ր ամա, գլոխս առնեմ փախչիմ պիտի, կը տեսնաք գուք, ետքէն ծեծկուիք նէ ալ ֆայտա չու-նի...

— Հա՛վատար տեղ մը գտնաս նէ մեզի ալ ըսէ տէ Մերկէլ աղան առնեմ գա՛մ...

— Զանաւարութիւն է աս ըրածնիդ տու-տու, սա հալըս մէյմը նայէ... կը շարու-նակէ օրիորդը տեղէն ելլալով:

— Շատ ու քիչ վռթկած տեսեր էի ամա, մեղայ քի քեզի պէսին ըռասթ էի եկէր... ի՞նչ կըլլաս կոր քա... խեղճիդ եկաւ...

— Տուտուս, սանկ մէյ մը միտքդ բեր, քու վախիդըդ հարըս առիր նէ, մէկը ելար

ըսէր քի չպիտի առնես տէյի նէ ի՞նչ կըլա-յիր...

— Առէր եմ տէ ի՞նչ է եղէր, էշերու պէս ըրւշման եմ... ինչիս ետար է քի, կը տեսնաս կոր իշտէ...

— Սա լախըտըն քսան տարի առաջ չէիր ըսէր կոր ամա...

— Ան ատենը ճիճի մամաի ատեններ էր, հիմաճուկուան պէս չէր քի ընէի...

— Էհ, աղէկ քի կըսես կոր, ես ալ Սրխ-պոսը առնեմ տէ, վախթ ասնի նէ պէլքի ես ալ քեզի պէս կըսեմ, ի՞նչ գիտնամ...

— Բա չըսեմ ըսի ամա պողազիս քէօքը եկաւ լախըտըն, տա ետիւր աշուին ինչի՞ն հաւներ տէ առնել կուզես կոր, կուողըս տա-նի սուռաթը...

— Տուտու քեզի առնելու չէ, ես պիտի առնեմ, հէրիք է քի հաւներ եմ...

— Բա՛, ինծի չիյնար ամա, զօռօվէն ը-սել կուտաս կոր, աստար պօյտաշներ ունիս, հէլպէթ ամէնքն ալ տույղուլու են, մէյ մէկ հէգի ունին ծառքերնուն տիպը, անոնք նա-սը վախթ կանցունեն կո՞ր նէ, դու ալ անոնց պէս ըրէ, աս ելլել առնել կարգուի՞ր ի՞նչ է...

— Աֆէրիմ տուտուս, աղուոր խրատ կու-տաս կոր... սանքի չառնեմ հետը իյնամ ելլամ, աղուոր մը ֆասըլ ըլլամ, ետքէն ալ րիճի պէս երեսի վրայ մնամ, անիկայ սիրէ սիրէ պիւմիշ ըլլայ, երթայ պաշխասին առ-նէ, ես ալ խըղ խուռուսի մնամ... հա՛, ասանկ կուզես կոր...

— Ինծի նայէ Ուստիկ, վախթ չունիմ քեզ մտիկ ընելու, զաթը սիրտս նեղ է... քեզի սօն ճուղապը տուի իշտէ, չըլլար վէս-սէլամ... ըսելով տիկին մայրը խոհանոց կիշնայ իր գործին պարապելու:

Օր. Ուստիկ երբ յուսահատ վերը սեն-եակը կը քաշուի պահ մը արտասուելու իր չար բաղդին վրայ, ինչպէս սովոր են ընել մերժուած աղջիկները, վարը դուռը կը զար-նուի և շարշալ կին մը կը տնկուի սեմին վրայ:

— Գուզում քուրուկ, չամաչըրի մանտալ ունիս նէ տուր տէ կէնէ կուտամ, հովը բիւ-թին վար կը թափէ կոր չարչափները...

— Ան խօլայ է, քիչ մը ներս չե՞ս ի գար...

— Խաղանիս տակը կիւռիւ կիւռիւ եմ ըրէր, պօշը կասնի տէյի կը վախնամ կոր, սիրտս ալ չըլլար կո՞ր ամա ...

— Չես հարցուներ կոր քի Ուստիկին գործը ի՞նչ եղաւ տէյի ...

— Հա՛, աղէկ ըսիր, տահա ոտքը կը կոխէ՞ կոր քա ...

— Քա ի՞նչ կըսես կոր, ոտք կոխեն ալ լախըռտը է, բիւթին ինքիզինքին խասթ ընելու է ելէր ...

— Ան սէվտային գօռէն է, մի վախնար, է՛յ ... ի՞նչ պիտի ընէք ... պիտի տա՞ք...

— Սատկի նէ ալ չպիտի տամ, ինատ չէ՛ մի ...

— Աղէկ ամա, չելլայ սիրտին գնէ տէ պան մը ըլլայ քա, եանի ատ թառափն ալ մտմտալու է ...

— Բան մըն ալ չըլլար, սէվտալը է կըսես կոր ամա սուֆուային տիպը չորս հոգիին կերածը կուտէ կոր բօստալը ...

— Տղան կասնի կը դառնա՞յ կոր կէնէ...

— Երէկ իրինկուն թօհաֆ մը ըլլայ քի, սանկ վարի օտան մութ տեղը մայթապին նստեր եմ, թեւերս ալ սոթթեր էի, պուլա-չըխըս ըլլալէս ետքը, Մերկել աղան ալ դէմս նստեր կը խորաթուէինք կոր, մէյ մըն ալ պիրտէն պիրէ թեւիս լոֆ միսը չի սխմուի մի, սանկ բաց բէնճիրէէն դուրս էի ձգէր...

— Վո՛ւյ, ես ըլլամ դիւահար կելլամ...

— Անանկ մը պողացի տէ վեր ցատկեցի քի, կլիաւորիս սիկառան սիկառնիկէն ելաւ տէ օտային օռթան թռաւ ..., սանկ մէյ մը կլոխս դուրս հանեցի քի նայիմ ո՛վ է տէյի, նայիս քի սըլըգ սըլըգ շուք մը սոխախն ի վար անյայտ եղաւ ...

— Էյ քա ո՛վ էր ածապ, ո՛վ կրնայ ճէսարէթ ընէր ատ պանը ... կը հարցնէ դըրացնունին շուարած:

— Քա ո՛վ պիտի ըլլայ, իշտէ պէս պէլլի ատ բիճն էր, զահէր Ուստիկը գիտցաւ տէ մէյ մը թեւը սխմեմ ըսաւ ...

— Քա սանքի ատտար իրար կը սիրեն կոր նէ, տա՛ս ածապ ...

— Անոր տալուս խողերուն կուտամ ինչալլահ ...

— Սո՛ւս ... կիւնահ է, կէչ մըսէր քու-

րուկ, ատանկ զաւակ մը քանի՞ տարիէն հասը կուգայ ...

— Էյ բէք աղէկ, ի՞նչ ընեմ, դուն ալ բան մը ըսէ տէ ան ընեմ, ես ըսեմ քի չա-չըրմիչ եմ ըրէր, նասըլ առաջըր առնենք բօստալին:

— Հիմա ինծի նայէ, ես տղուս կրսեմ քի Ուստիկին հետ գործը եփէ սուտտանէ, թող աղուոր մը զինը չէլմիչ ընէ, իրեն դառցունէ, ան ալ անդիինէն կը պաղի, աս-դին կը դառնայ, ասդին դառնալուն կիպի, տղաս անտեղուանքն է ... դուն աղէկը դիտես, ետքէն ասանկով կազատինք իշալ-լահ ...

— Վո՛ւյ խելքդ սիրեմ քի միտքիդ մօտ է, տեսա՞ր, աղէկ ըսիր, ապրիս ...

— Հիմա աս իրինկուն, դուք էրի՛կ կնիկ տեղ մը գացէք, ես Սիրականը կը զրկեմ, թող մինակնին նստին, ինչ ընեն ընեն, պիտի տեսնաս քի ինտո՛ր պիտի աջողինք ...

Դրացնունին իր խուռնազուլթեամբը յա-ջողած էր կորզել Մերկել աղայի աղջիկը իր տղուն, որ երկու հարիւր զրուշ ամսականով ուրիշի մը քով էր, և թէ Մերկել աղային գործին մօնալ կուզէր, բայց չէր յաջողած, մինչդեռ միւսը, որուն տալ չէին ուզէր Ուստիկը, ինքն իրեն գործի տէր տղայ մընէր, հեղ և բարի:

Նոյն իրինկունը, երբ Մերկել աղա տուն կը հասնի, տիկինը առանց ամուսնոյն կռահել տալու խնդիրը, այնինչիններուն վիզիթ պարտք ունինք ըսելով՝ կը համոզէ և աղա տուտու դուրս կելլան տունէն, միս մինակ ձգելով Օր. Ուստիկը, որ ան ալ իր կարգին առիթէն օգտուելու ուզելով, որպէս զի իր ուզած տղան ներս ագնէ, կը համակերպի և այսպէս կը կարգադրուի իրենց տուտալը:

— Բարի իրինկուն օրիորդ, կրնամ ներս մտնալ, կը հարցնէ Սիրական, դրանը սեմին վրայ օրիորդին:

— Ինչո՞ւ չէ, հրամանեցէք, բայց գիտնալու էք քի հարըս մարըս հոս չեն, դուրս ելան ...

— Աւելի աղէկ հոգիս, արդէն ես ալ այդպէս առիթի մը կսպասէի կոր կըսէ և գաւազանը մէկ կողմ դնելով՝ ամուր մը օրիորդին ձեռքը կը սեղմէ:

— Բայց քանի որ տունին մէջը մինակ եմ, ինչպէս կըլլայ որ ...

— Ա՛խ օրիորդ, ժամանակը սուղ է, պէտք է յայտնեմ ամէն բան, ա՛խ օրիորդ, ձեր կրակը, ձեր սէրը կը լմնցունէ կոր զիս ...

— Վայ գլխո՛ւդ ... աս բանին համար եկար նէ բարի եկար ... տէմինդ անտեղուանքը չէ, աչքդ բաց ...

— Հոգիս ... եկուր չէ մըսեր ... եթէ այո՛ մը ըսես և համակերպիս ինծի, գիտցած եղիր, վաղը պիտի պսակուինք, և թէ մեղրալուսինը Թռանտապուլ պիտի անցունենք երկնասլաց կառախումբով ...

— Ձրւար ըսի՞նք ես ... չօգ չէ՛յ ... ես ծախուած եմ, ես տէր ունիմ, իմ սիրտս ուրիշինն է ...

— Ճանրմ, զարմանալի բան, չի կրնար ըլլալ որ ետ առնէք և ինծի տաք ... ես ո՛ր կը հալիմ կը մաշիմ կոր ձեզի համար, կըսէ և ճարպիկ ձեռով մը ձեռքը չըթուէնքերուն կը տանի ... չա՛բ ...

Ա՛խ սա աղջիկները ... օր. Ուստիկ երբ երիտասարդին տաք չըթներուն հպումը կողքայ իր մորթին վրայ, կը ցնցուի, երեսին գոյնը ճեր ճերմակ կըլլայ և մարմինը փուշ փուշ ...

— Ըսէ՛ք օրիորդ, պիտի սիրէ՛ք զիս, պիտի ուզէ՛ք կապուիլ ինծի հետ ...

Օր. Ուստիկի բաց օտարական անքան յափշտակուած էր հիմա միւսիւ Սիրական, որ իր դերը մոռնալով՝ իրօք սիրականը եղած էր օրիորդին, և ոտքը ձեռքը կը դողար ...

— Ըսէ՛ք օրիորդ, խօսք տուէ՛ք որ զիս պիտի սիրէք և պիտի կապուիք ինծի հետ, քիչ չատ գործի տէր եմ, հայրս լաւ դիրք մը ունի, ապագաս ապահով է, և կրնամ քեզ վստահացնել թէ՛ երջանիկ պիտի ընեմ ձեզ ... (համբոյր մը կը դրոշմէ և այս անգամ ծոծրակին վրայ) ...

— Մընէր ճանրմ, գէշ կըլլամ կոր ... կըսէ Ուստիկ ցնցուելով ...

— Գիտեմ թէ գէշ կըլլաք կոր, որովհետեւ սիրել սկսաք օրիորդ ...

— Էյ բէք աղէկ, սիրելու ըլլաք, պարտաւոր եմ առնեմ ինծի, չէնէ մի սիրես սիրես էյլէնմիշ ըլլամ, ետքէն ալ պիտի ձգես ... ո՛րն է ...

— Հաւատացէ՛ք օրիորդ, եթէ նոյն իսկ հիմա, ընդունելու ըլլաք, պարտաւոր եմ ձեզ տանելու, և լուսնալուն պէս եկեղեցին պարտաւոր է զմեզ գլուխ գլխի տալու համար ...

— Իրա՛ւ ես սիրական ... հաւատամ խօսքիդ ...

— Կերդնում Ուստիկս ... ա՛խ, պատուոյս վրայ կերդնում ...

— Սա ծառքս պագ նայի՛մ ...

— Շա՛բ ...

— Դիչ մը վեր չե՛ս ելար ...

— Ձէ հոգիս, շուտով մը վրադ բան մը առ մեկինք, թէյղէս ծերուկ կնիկ մըն է աչքերը չեն տեսնար, անոր տունը կերթանք, վաղն ալ վերջնականապէս կը կապուինք ...

— Կայնէ քօթիններս հագնիմ ... ամա՛, Սիրակա՛ն, նայէ՛ տունս տեղս կը ձգեմ կուգամ կոր, իս մէղաւոր դրած կըլլաս ետքը ...

— Դեզի սիրտիս մէջը դրի Ուստիկս, ու հոն պիտի մնաս ... հայտէ՛ հայտէ՛ շուտ մեկինք, կեկան վրայ կը հասնին ...

Քառորդ մը վերջ երկու ստուերներ փողոց փողոց կը սուրային մէկ հոգի երեւնալու չափ իրարու մօտ քալելով ...

* * *

Մերկել աղա և կինը ժամ մը վերջ կը դառնան, ու երբ դուռը երեսի վրայ բաց կը տեսնան, ամուսինը կը հարցնէ ...

— Խաֆէսը բաց է կնիկ ...

— Խուշիկը թառն է, հոգ մընէր ...

— Ես հոս խուշ չեմ տեսնար կոր, ինծի կուգայ քի ճիւղճիկ հանելու գացեր է ...

— Վո՛ւյ մըսէր, դող կեկամ կոր ...

— Դրած թուռչիւնիդ նասը՛լ ... բէք քէսկին ելաւ վախնամ ...

— Քա աղջիկս, Ուստիկս չիգայ ... Ուստիկ ... Ուստիկ ...

Ու մութին մէջ հեռուէն արծազանգը կը պատասխանէր ... սը՛ս ... սը՛ս ...

— Է՛յ ... կըսէ Մերկել աղան, սանդուխին գլուխը նստելով, հիմա՛, Սիրականը աղուոր խանարմիշ ըրե՛ր է աղջիկդ քի ան տղան չառնէ տէյի ...

— Խելքիս պիտի գայ հիմա, պարէ դուն սուս եղիր, նայինք ի՛նչ պիտի ընեմ ...

— Հի՛չ, ինչ պիտի ընես, քեզի պէս անխելք մարերուն ասանկ կը վաղէ, Աստուած թամամին հասցունէ, մէկ բարձի վրայ ծերանան ըսէ տէ մենք ալ տեղերնիս ելանք ալթըխ ...

Անխել մայրեր երբ իրար գան, ինչպէս օտար հոս իրական, թուռսի մը կամ Սիրական, Զօհեն աղջիկ, մանչ սիրական ...

ԼԽԼԱ

ԴԱՐԱՍԿԶԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Հ

Հայր. — Առանց կամքիդ ու գիտութեանդ տէր եղած մէկ բանդ:

Հաց. — Փոխանակ բերնիդ՝ աչքդ բաց:

Հասակ. — Բան մը՝ որ եթէ մարդուս խելքին հետ հաւանար մեծնալու ըլլար, ապահովարար այսօր Ե. Ա. ամէնէն քիչ խելք ունեցած պիտի ըլլար:

Հանոյ. — Զգալու համար՝ պէտք է կարդալ Ալփիարը, Կավոօչը ու Լիւան, որոնք բոյն դրած են Հանրագիտակի մէջ:

Հարուս. — Մահկանացուներուն երանելիագոյնը՝ որ եթէ հացագործին ու մսավաճառին հազարներով ալ պարտական ըլլայ կրկին անոնք իրեն հետ խորին ակնածանօք կը վարուին, սակայն գալով ինծի ու քեզի հակառակ գիշեր ու ցերեկ պարտքերնիս մտածելուս, հարիւր ղրուչի համար կը նեղեն պահանջատէրները:

Հարկաւոր. — Պէտք եղած բան մը, զոր օրինակ կերակուրի համար աղը հարկաւոր է, լուացուելու համար ջուրը հարկաւոր է, արդուկելու համար արդուկը հարկաւոր է, դըպրոցին անտես աղքատը հարկաւոր է, գրելու համար գրիչը հարկաւոր է, գրականութեան համար գրագէտը հարկաւոր է:

Համբոյր. — Մանուկներու միջեւ սիրոյ արտայայտութիւն, ամուսնացեալներու միջեւ կերակուրը տաքցնելու պէս բան մը, իսկ անծանօթներու միջեւ՝ տպագրելի մեղքի գրքին յառաջաբանը:

Համբակ. — Ամբակում ալ կըսուի, բայց ոչ իբր անուն գործածուածը:

Հարազատ. — Թէեւ այս բառը ստուգաբանօրէն հայրը զատ կը նշանակէ, սակայն մէկ հօրէ ու մէկ մօրէի նշանակութեամբ կը գործածուի:

Հարս. — Ընդարձակ առուժով լայնածաւալ ազգականական բառ մը, որ կրնաս գործածել քու կիներդ սկսեալ մինչեւ օխտը պօրտը, մէկուն կնկանը համար երբ կուզես և կամ սիրես գործածել:

Հաւկիթ. — Մինչեւ հիմա գիտէինք թէ հաւկիթը հաւէն կելլար և տասը փարա կը ծախուէր, բայց հետզհետէ տեսանք ու համոզուեցանք թէ՛ բուն հաւկիթը դարավերջիկ երիտասարդութենէն կելլէ և անոր համար է որ հիմա հաւկիթը փարա մըն է:

Հանած-վարած. — Բառ մը՝ որ ինձմէ զատ շատ մը հանած-վարածներու կը գործածուի:

Ի լոյս էած
ՌՈՄԱՆՈՍ

“ԱՐԺԱՆԻՔԻ ԽԱԶԸ”

ԱՐԺԱՆԱՌՈՐԻՆ

Մեծաւ ուրախութեամբ կը փութանք շնորհաւորել, Գերման Դեսպանատան քարգման Ազն. Հայկ Էֆ. Թայֆեսեանը, որ ի վարձ իր բարւոյ եւ անխոնջ աշխատութեանց՝ արժանացած է Քոռուսի մերիթ (Արժանիքի Խաչը) պատմանաւորին, շնորհուած Բարձր. Սաֆա Փօպուրկ Կօրայի Դուստին կողմէն:

Հայկ Էֆեսի, գաւառի գաւազ, մայր բնութեանն սնած ու մեծցած, լոկ ինքնօգնութեան օրինակելի գաղափարականով՝ այսօր բարեմախանձ դիրք մը գրաւած է իր ուսանին մէջ:

Մեր ջերմագին շնորհաւորութիւններուն կը կցեն՝ ալ աւելի ցայտուն ու բարձր գեղանայականներու յաջողութեան մաղթանք:

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տնօրէնութիւնս կը խնդրէ իր այն բաժանորդներէն՝ որոնց հասցէին բաժնեգնի առաքման մասին քանիցս գրուած է, հաճին ընդփոյթ հասցնել դրամները, ապա թէ ոչ՝ պիտի ստիպուինք դադրեցնել թերթերը:

ՇԱԲԱԹԱԳԻՐՍ

ՖՕՆՕԿՈՒԱՑ ԳԼՈՒԽՆԵՐ

Կըսուի թէ, այս տարուան դպրոցական քննութիւններուն, երեւան եկեր է որ, մեր վարժապետներէն ոմանք սորվեցնելու նոր մէթոտի մը դիմեր են: Այդ վարժապետները կերպը գտեր են — այդ գիւտը ժամանակագրական ցանկին մէջ պիտի անցնի եղեր — այո՛, կերպը գտեր են իրենց ձեռքը յանձնուած տղոց գլուխներուն մէջ մէյ մէկ ֆօնօկրաֆի գետեղել: Բլաֆներ պատրաստուած է եղեր ուսուցիչներու կողմէ, որոնք կը պարունակեն եղեր զատ զատ գիտութիւնները:

Ա. բլաք՝ Հայերէն աշխ., Բ. բլաք՝ Գըրաբար, Գ. բլաք՝ Գաղղիերէն, Դ. բլաք՝ Ֆիզիք, Ե. բլաք՝ Մաթէմատիկ ու ասանկ կը շարունակուի: Բայց մեծ անճարակութիւններ ալ եղեր են, զօր օրինակ. բլաֆէն դուրս հարցուածներուն չէ՛ պատասխանուէր, երբեմն ալ բլաֆները սխալ գետեղուէր են՝ Ֆօնօկրաֆի-ուսուցիչներու կողմէ: Այն ինչ վարժարանի Աշխարհագրութեան քննութեան ատեն քննիչ մը կը հարցնէ աշակերտի մը՝ առանց գիտնալու անոր գանկին մէջ ֆօնօկրաֆի մը գտնուիլը:

— Տղա՛ս, Գերմանիոյ քաղաքները որո՞նք են...:

Վարժապետը իսկոյն Գերմանիոյ քաղաքները պարունակող բլաֆը կանցնէ տղուն գանկին մէջի մեքենային վրայ, կը լարէ ու աշակերտը կսկսի... Թութակօրէն արտասանել արագ արագ:

— Մի... մի... միլանօ, Թուրինօ, Նաբօլի, Ճէնօվա, Վենետիկ...

Ուսուցիչը. — Ո՛հ, ո՛հ, սխալ բլաֆ գետեղեր ենք, Իտալիոյ քաղաքները պարունակող բլաֆ դրեր ենք, աճապարենք ու Գերմանիանը գետեղենք:

ՔՆՆԻՅՐ. — Բայց ... բայց ... բայց... տղաս ատ ըսածներդ Իտալիոյ քաղաքներ են և Գերմանիայէն չատ հեռու, բայց միաս չունի, շարունակեցէք Իտալիոյ քաղաքները...

Ուսուցիչը արդէն բլաֆը փոխած և Գերմանիանը դրած ըլլալով, տղան կսկսի.

— Պը... պը... րէսլա, Մակ...

ՔՆՆԻՅՐ. — Իտալիաի՞նը...

— ...Մակտէպուրկ, Քասէլ, Հա...

ՔՆՆԻՅՐ. — Տղա՛ս, Իտալիանը Իտալիանը...

— ...Հանովը, Քօլօնիա, Տարմաթատ, Լայթցիկ, Բոցտամ, Աախէն կամ Էքսլաշաբէլ...

ՔՆՆԻՅՐ. — Տղաս ատոնք Գերմանիոյ քաղաքներն են և Իտալիոյ քաղաքներէն չատ հեռու, քեզի թէրս սորվեցուցեր են տղաս, և օր մը երբ վաճառական ըլլաս ու պէտքը ունենաս ճամբորդելու, Գերմանիա երթալու տեղ Իտալիա պիտի երթաս, Միլանօն Պրէսլաւին հետ պիտի շփոթես, Թուրինօն Մակտէպուրկին, Մակտէպուրկն ալ Թուրինօն հետ, Նաբօլին եւ Ճէնօվան՝ Քասէլին ու Հանովին հետ, և օր մը երբ Վենետիկի վրայ հիմնալու համար ճամբայ ելլաս՝ ինքզինքդ... Աախէն կամ Էքսլաշաբէլ պիտի գտնաս:

Ուսուցիչը. — Տէ՛ր, բլաֆներուն քով է սխալը...

— ՔՆՆԻՅՐ. — Բլաֆ մի՛, ի՞նչ կըսես կոր պէ՛ ախպար...

— Բայց գիտնալու էք որ տղոց գանկերուն մէջը ֆօնօկրաֆի մեքենաներ կան...

— Հէ՛, ախպար մէյ մըն ալ կրկնէ...

— Բայց գիտնալու էք որ տղոց գանկերուն մէջը ֆօնօկրաֆի մեքենաներ կան...

— Իրաւ կըսես կոր...

— Այո, գիւտ է...

— Վա՛յ, ըսել է աս տարի ալ ֆօնօկրաֆի գլուխներ երեւան բերիք, պաւօ՛...

Ուրիշ քՆՆԻՅՐ. — Տղաս, ինչու Մարմարա ծով կըսեն Մարմարա ծովին...

Աւակերտք. —

Ուսուցիչը. — Տէր, այդ հարցումին պատասխանը բլաֆին վրայ չէ առնուած դեռ:

×

Այլակերպեալ օրինակ մըն է սա վերի տողուածները:

Մենք այդպէս խօսեցանք, որովհետեւ ժամանակ ու ախորժակ չունինք տարբեր կերպով խօսելու:

Հասկցողին շատ բարեւ:

ԱՆՄԵՌՈՒԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Մագերէն զատ ոչ մէկ կերպով բանաստեղծի նմանող բուշուլեա մը՝ Պր. Սալանկէօղեան, օգափոխութեան համար ժողովայ քաղաք մը գտնուած պահուն տեղւոյն ընթերցատունը մեր ամէնէն գնահատուած Հանրագիտական ի տես զայրացած ըլլալը կիմացնեն մեզ: Անգամ մ'ընդ միշտ կը խրատենք այդ «հաւկիթին մէջինը» ին թէ՛ Հանրագիտական թացիկ ու զէվզէկներու մարտելիք խմորը չէ, անիկայ պաշտօն ունի ճանչցնել լուրջը եւ օգտակարը, և ձաղկել բանաստեղծի ցուրտ հովեր փչող պաղպաղակատուիները, ընդ որս եւ դուք միւսիւ Սալանկէօղեան, (խմբագրութեան կողմէ այս գրուածքին մէջ մաս չունիմ, եթէ լուր մ'ալ առնելու ըլլամ իմ կողմէս ա'յն ատեն կը գրեմ... Լիլա):

ԲԵՐԱ. — Էստեան վարժարանը վերէն վար աւելելու համար տոկուն եւ գործածական սիւբիւռօկէի մը պէտք կայ դպրոցին տարելիցին առթիւ, որպէս զի նոր շրջանին տըղաք մաքուր մթնոլորտ մը ծծեն:

ՊԷՊԷՔ. — Անցեալ կիրակի տեղւոյս պարտէզին առջեւ թիավարութիւն ընող նշանած օրիորդ մը, երբ ղեկը նստող նըշանածին ճախա ընել կը փորձէր, սկառմովին կտորելով օրիորդին ոտքերը մեռելի մոմի պէս վեր տնկուեցան. (Ասիկայ խրատ ըլլայ ուրիշներու որպէս զի դուրս ելած ատեննին ձերմակեղեննին փոխեն որ մաքուր ըլլան... էշ խաղա՛... Ծ. Լ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Ա. Խաչ եկեղեցւոյն համար նորակազմելի եռաձայնի խմբին անդամոց համար մէկ քանի համակիրներ գիւղերը պիտի երթան թարմ հաւկիթ ժողովելու նպատակաւ: (Մենք ալ ունինք. Ծ. Լ.):

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Ծանօթ պանդոկապետ Յովակիմ աղան, այս տաքուան պիլանչօն հանելու համար վարժ տոմարակալի մը պէտք ունի:

ԲԵՐԱ. — Կը լսենք թէ միւսիւ Զիւպ Հաւկիթեան, չաբաթէ մը ի վեր մեծ պատ-

րաստութիւններ տեսնալու վրայ է կղզի օգափոխութեան երթալու համար՝ ուր օթէլը պիտի իջեւանի, (Երանի հոն գտնուողներուն որ ցորեկ գիշեր օվէթ եւ չըլպըր պիտի ուտեն. Ծ. Լ.):

ԳՐՆԱԼԸ. — Կիրակի առաւօտները տէպարքատէրին զրօսարանը դիմող տիկիներէն կը խնդրուի քիչ մը պատշաճութիւնը յարգելով «հոս Գնալը է, ո'վ որի» չըսեն և կոկիկ գոց հագուստներով գան նստիլ, ասեղին ծակէն դիտողներու քար գայթակղութեան չըլլալու համար:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ներկայ տաքերուն ցերեկները չնեղունելու համար կարգ մը տիկիներ սկսած են զուտ կտաւէ ոսպ տը շամպուներ կրել մարմիններու վրայէն: (Երանի տօնտուրմածիններուն, որոնք ցերեկ ատեն փողոցները պտտելով՝ գունազեղ բանօռմաններու աղանատես կըլլան. Ծ. Լ.):

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մեր հետեւեալ Պատ. բաժանորդներէն կը խնդրուի մեզ հասցնել իրենց բաժնեգինը՝ եթէ կուզեն որ թերթերը չընհրատենք:

Կիրաւոն. — Դ. ԷՖ. Հ.

Էսիրեկ. — Կ. ԷՖ. Մ.

Քեօքահիւ. — Կ. ԷՖ. Ո.

Զարեամպա. — Դ. ԷՖ. Յ.

Էրգրում. — Դ. ԷՖ. Ս.

Սեւաթիկ. — Վ. ԷՖ. Շ.

Կէյվե-ագ-հիսար. — Յ. ԷՖ. Մ.

Պանգրմա. — Մ. ԷՖ. Ֆ.

Արտօմաքր ԱՐՄԷՆ ԼՈՒՐԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ.

Պապը-Ալի ճառարի քիւ 52.

ՄԵԾ Կ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանքաց
տոկոսութեամբ եւ գիններու անմիջեղի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նման-
որինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—40



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵՑԷՐ

ՓՈՒԹԱՑԷՐ ԳՆԵՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէջ խանի
ճակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը:
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Ջինասանէ, Հնդկաստանէ, Ճապէտ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ

ՊԱՏՆԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար արեւիկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասահման	»	»	14 Ֆր.
		»	6 Ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՋԱՆ ՓԱՓԱՋԱՆ, Պապը-Ալի հասսկի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրաւները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանսարութով եւ կամ բոսթայի փուլով 20 հոգի
20 ղրուլի հաշուով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ
ՀԵՐԵԹԻԿ ՊՈՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ցառէսի քիչ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ
մօտ երեսուն տարուան հաստատութիւն
մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաք-
րութեամբը և արագութեամբը արդէն
մեծ համբաւ չափած և գրաւած է վրս-
տահութիւնը ամէն անոնց՝ որոնք փոր-
ձով հաստատած են այս առաւելու-
թիւնները:

Հերթիկ էֆ. Պոյաճեան այս ան-
գամ Եւրոպայէն բերել տուած ըլլալով
արհեստին կատարելագործեալ կարգ մը
մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ
մայրաքաղաքիս բոլոր կազմարարներու
արժադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:

ԳԱՌՆԻԿ ՔԷՇԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Քուլօ խան իբլ 2

Նախ փորձառուները, յետոյ խար-
ուողները միայն գիտեն էթ ո՛րչափ
գոյնար է, դտնել ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան:

Դառնիկ Բէշիշեան վաճառատունըս
թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց և արանց յա-
տուկ Ֆանկլաներ, գուլպաներ, քաւիկնակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեմներ,
Ֆիլթիֆու և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, գլխու շարքեր, քաւ ֆոսէկներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն
գիմելով պիտի հաստատեն թէ՛ գինե-
րու աժանութեան, Տեսակի ազնուութեան և
ապրանաջ թկունութեան երեք առաւե-
լութիւնները ուրիշ ո՛ր է տեղ կարելի
չէ գտնել: